Կ-1263[1]-16.02.2026-ԳԿ-011 *Երկրորդ ընթերցում*
(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1.** «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) կամ ղեկավարման իրավունքի հավաստագրի (այսուհետ նաև՝ հավաստագիր) ստացած անձը:».

2) 3-րդ մասը շարադրել հետևալ խմբագրությամբ՝

«3. Հավաստագրի համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:».

3) 9-րդ մասում՝ «բացառությամբ» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «օրենքներով սահմանված հավաստագրի գործողությունը դադարեցնելու դեպքերի:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ կետով.

«17.1) հաստատում է ոչ պետական ուսումնական հաստատության և մասնավոր հատվածի հետ համատեղ ծրագրերը.»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 31. Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետարանի իրավասությունները

1. Հանրակրթության բնագավառում մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) մարզի տարածքում (Երևան քաղաքում) գործող ուսումնական հաստատությունների (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) ունի հետևյալ իրավասությունները՝

1) իրականացնում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության (անշարժ և շարժական գույքի) նպատակային օգտագործման և պատշաճ պահպանության գործընթացների համակարգումը.

2) հավաքում, ամփոփում և կրթության պետական կառավարման լիազորված մարմին է ներկայացնում ուսումնական հաստատությունների վարչատնտեսական գործառույթներին առնչվող տեղեկատվությունը.

3) որպես գործատու՝ մարզի տարածքում (Երևան քաղաքում) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է պետական ուսումնական հաստատությունների համակարգողի հետ աշխատանքային հարաբերությունների կազմակերպման աշխատանքները.

4) իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակված ծառայությունների իրականացման մշտադիտարկումը.

5) աջակցում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) կրթական ծրագրերի, դպրոցականների մասնակցությամբ մարզական և մշակութային միջոցառումների անցկացման, հանդիպումների կազմակերպման գործընթացներին.

6) մասնակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման և հանրակրթության մեջ ներգրավման աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի և շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ.

7) շինարարության ծրագրերի շրջանակներում համակարգում է դպրոցների ուսումնական գործընթացն այլ ուսումնական հաստատությունում իրականացնելու, անհրաժեշտ տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման աշխատանքները.

8) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացին.

9) աջակցում է մանկավարժների ատեստավորման գործընթացների կազմակերպմանը.

10) համակարգում է դասագրքերի հայտերի ձևավորման և բաշխման գործընթացները.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 4. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն Օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում՝ մարզպետերի աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1.** ~~-~~ «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2. Տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով *հանրակրթական* ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք *(հավաստագիր) կամ ղեկավարման իրավունքի հավաստագրի* (այսուհետ նաև՝ հավաստագիր) ստացած անձը:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

~~3-րդ մասում «Հավաստագրի համար կարող է դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի կրթության ոլորտի բարձրագույն կրթություն եւ վերջին 10 տարվա ընթացքում գիտամանկավարժական կամ մանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:» բառերը փոխարինել~~ ~~-~~ «3. Հավաստագրի համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40~~-~~. 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:»:

3) 9-րդ մասում՝ «բացառությամբ» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «օրենքներով սահմանված հավաստագրի գործողությունը դադարեցնելու դեպքերի:

(տես 9. Սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքած պետական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնավարման ընթացքում հավաստագիրը շարունակում է գործել, բացառությամբ օրենքներով ~~*կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից*~~ սահմանված հավաստագրի գործողության դադարեցման դեպքերի:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ կետով.

Հոդված 29. Հանրակրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) հանրակրթության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականությունը.

2) հաստատում է հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը.

3) հաստատում է հանրակրթության պետական չափորոշիչը.

3.1) սահմանում է այլընտրանքային (հեղինակային, փորձարարական և միջազգային) կրթական ծրագրերի փորձաքննության անցկացման, ճանաչման և հաստատման կարգը.

4) հիմնադրում, վերակազմակերպում է ուսումնական հաստատությունները.

4.1) հաստատում է ուսումնական հաստատությունների ցանկերը.

5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

6) հաստատում է պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը.

6.1) հաստատում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի պատվիրակման կարգը.

6.2) հաստատում է պետական ուսումնական հաստատության համակարգողի նշանակման կարգը.

7) հաստատում է այն հիվանդությունների ցանկը, որոնց առկայությունը խոչընդոտում է մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

8) սահմանում է պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը.

9) հաստատում է հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերի ձևերը.

10) սահմանում է ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը.

11) սահմանում է ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները.

12) հաստատում է ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգը.

12.1) սահմանում է հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման կարգը.

12.2) սահմանում է ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը.

12.3) սահմանում է ուսուցիչների կամավոր ատեստավորման կարգը.

12.4) հաստատում է կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը.

12.5) հաստատում է մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների և մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կարգը և կամավոր ատեստավորման արդյունքով մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետներին և մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման կարգը.

13) սահմանում է ուսուցիչների ատեստավորման տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը.

14) սահմանում է տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը.

15) հաստատում է ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը.

16) սահմանում է ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը.

16.1) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման գործակիցները և նորմատիվները, ֆինանսավորման կարգերը.

17) սահմանում է պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման ենթակա ոչ պետական ուսումնական հաստատությանը ներկայացվող պահանջները և չափանիշները.

17.1) հաստատում է ոչ պետական ուսումնական հաստատությունների և մասնավոր հատվածի հետ համատեղ -ծրագրերը

18) սահմանում է ուսումնական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մրցույթի կարգը.

18.1) սահմանում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը.

18.2) սահմանում է բարձր կատարողականի արդյունքով ուսումնական հաստատություններին խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը.

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 3.- Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 31. Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետարանի իրավասությունները

1. Հանրակրթության բնագավառում մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) մարզի տարածքում (Երևան քաղաքում) գործող ուսումնական հաստատությունների (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) ունի հետևյալ իրավասությունները՝

1) իրականացնում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության (անշարժ և շարժական գույքի) նպատակային օգտագործման և պատշաճ պահպանության գործընթացների համակարգումը.

2) հավաքում, ամփոփում և կրթության պետական կառավարման լիազորված մարմին է ներկայացնում ուսումնական հաստատությունների վարչատնտեսական գործառույթներին առնչվող տեղեկատվությունը.

3) որպես գործատու՝ մարզի տարածքում (Երևան քաղաքում) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է պետական ուսումնական հաստատությունների համակարգողի հետ աշխատանքային հարաբերությունների կազմակերպման աշխատանքները.

4) իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակված ծառայությունների իրականացման մշտադիտարկումը.

5) աջակցում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) կրթական ծրագրերի, դպրոցականների մասնակցությամբ մարզական և մշակութային միջոցառումների անցկացման, հանդիպումների կազմակերպման գործընթացներին.

6) մասնակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման և

հանրակրթության մեջ ներգրավման աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի և շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ.

7) շինարարության ծրագրերի շրջանակներում համակարգում է դպրոցների ուսումնական գործընթացն այլ ուսումնական հաստատությունում իրականացնելու, անհրաժեշտ տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման աշխատանքները.

8) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացին.

9) աջակցում է մանկավարժների ատեստավորման գործընթացների կազմակերպմանը.

10) համակարգում է դասագրքերի հայտերի ձևավորման և բաշխման գործընթացները.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված ~~2~~. 4 Սույն ~~օրենքն~~Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն Օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում՝ մարզպետերի աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1263-16.02.2026-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»				
1.	Կառավարություն	2-րդ հոդված	1. «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածի 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 4-րդ մասը, մինչդեռ նույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում պահպանվել է հղումը 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերին: Առաջարկում ենք Նախագիծը համալրել համապատասխան փոփոխությամբ՝ վերանայելով Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ի կետը եւ փոփոխելով այնտեղ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերին կատարված հղումը՝ ապահովելու համար օրենքի դրույթի	Ընդունվել է	Ընդունվել է

			հստակ կիրառելիությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3) 6-րդ մասի 1-ին կետում «1-4-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:»:		
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 2, կետ 1	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) կամ ***ղեկավարման իրավունքի հավաստագրի*** համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 3.	***Հոդված 3.*** Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ. 4) նախակրթարան՝ 4-6 տարեկանների, իսկ բնակավայրում ***նախադպրոցական կրթական ծրագիր կամ ծառայություն առաջարկող միակ ուսումնական հաստատությունը (կազմակերպությունը)*** լինելու դեպքում՝ 3-6 տարեկան երեխաների ընդգրկմամբ.	Ընդունվել է	Ընդունվել է
**«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	**Նախագծի վերնագիր**	Հաշվի առնելով, որ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է լրացում՝ գործող օրենքի 31-րդ հոդվածը նոր խմբագրմամբ լրացնելու վերաբերյալ՝ առաջարկվում է	Ընդունվել է	Ընդունվել է

			նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նրանում կատարվող փոփոխություններին՝ խմբագրելով հետևյալ բովանդակությամբ՝ **«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:**		
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 1, 1-ին կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1) *2-րդ մասը շարադրել հեետևյալ խմբագրությամբ.* *«2. Տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) կամ ղեկավարման իրավունքի հավաստագրի (այսուհետ նաև՝ հավաստագիր) ստացած անձը:».* 2) 3-րդ մասը շարադրել հետևալ խմբագրությամբ՝ «3. Հավաստագրի համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:». 3) 9-րդ մասում՝ «բացառությամբ» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «օրենքներով սահմանված հավաստագրի գործողությունը դադարեցնելու դեպքերի:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Նոր հոդված 2.**	Լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. *Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել*		

			հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ կետ. *17.1) հաստատում է ոչ պետական ուսումնական հաստատությունների և մասնավոր հատվածի հետ համատեղ ծրագրերը.*	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	1-ին հոդվածից հետո լրացվող նոր 2-րդ հոդված	2025 թվականի նոյեմբերի 24-ին ԱԺ կողմից «Հանրակրթության մասին» օրենքում ընդունված (**24.10.2025, ՀՕ-356-Ն**) **https://arlis.am/hy/acts/216708** դպրոցների ենթակայության փոփոխության արդյունքում նախատեսվում է, որ դպրոցների վարչատնտեսական կառավարումն իրականացվելու է մարզպետների աշխատակազմերի/Երևանի քաղաքապետարանի կողմից, և անհրաժեշտություն է առաջացել ավելի հստակեցնելու հանրակրթության ոլորտում տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետի իրավասությունները և լիազորությունները, որպեսզի ապահովվի դպրոցների գործունեության անխափան կազմակերպումը: Արդյունքում կձևավորվի հանրակրթության կառավարման ավելի հստակ և արդյունավետ մոդել, որը կնպաստի կրթական համակարգի կայուն զարգացմանը և պետական կրթական քաղաքականության հետևողական իրականացմանը՝ սահմանելով երկու կառավարման մակարդակների միջև համագործակցության և փոխգործակցության մեխանիզմները: Հաշվի առնելով վերագրյալը առաջարկում ենք օրենքի նախագիծը լրացնել նոր 2-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 2.** Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **«Հոդված 31. Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետի իրավասությունները** 1. Հանրակրթության բնագավառում մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) մարզի տարածքում (Երևան քաղաքում) գործող ուսումնական հաստատությունների (բացառությամբ մասնագիտացված ուսումնական հաստատությունների և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների) ունի հետևյալ իրավասությունները՝ 1) իրականացնում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության (անշարժ և շարժական գույքի) նպատակային օգտագործման և պատշաճ պահպանության գործընթացների համակարգումը. 2) հավաքում, ամփոփում և կրթության պետական կառավարման լիազորված մարմին է ներկայացնում ուսումնական հաստատությունների վարչատնտեսական գործառույթներին առնչվող տեղեկատվությունը. 3) իրականացնում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) պետական ուսումնական հաստատությունների համակարգողի հետ աշխատանքային հարաբերությունների կարգավորման աշխատանքները.		

			4) իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից վարչատնտեսական գործառույթների պատվիրակված ծառայությունների իրականացման մշտադիտարկումը. 5) աջակցում է մարզի տարածքում (Երևան քաղաքում) կրթական ծրագրերի, դպրոցականների մասնակցությամբ մարզական և մշակութային միջոցառումների անցկացման, հանդիպումների կազմակերպման գործընթացներին. 6) մասնակցում է պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման և հանրակրթության մեջ ներգրավման աշխատանքներին՝ համագործակցելով ուսումնական հաստատության, համայնքի և շահագրգիռ մարմինների պատասխանատուների հետ. 7) շինարարության ծրագրերի շրջանակներում կազմակերպում է դպրոցների ուսումնական գործընթացն այլ ուսումնական հաստատությունում իրականացնելու, անհրաժեշտ տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման աշխատանքները 8) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացին. 9) աջակցում է մանկավարժների ատեստավորման գործընթացների կազմակերպմանը.		

			10) համակարգում է դասագրքերի հայտերի ձևավորման և բաշխման գործընթացները. 11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:»: Ըստ այդմ՝ հոդվածների համարակալումը վերանայվել է:		
5.	Կառավարություն	Նոր հոդված 4. 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդված	Հաշվի առնելով, որ օրենքի նախագիծը լրացվել է նոր՝ 2-րդ հոդվածով առաջարկում ենք 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ . «Հոդված 3. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն Օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում՝ մարզպետերի աշխատակազմերի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:»:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				

1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Լրացնել նոր հոդված 2, Համապատասխանաբար հաջորդող 2-րդ և 3-րդ հոդվածները համարակալել 3-րդ և 4-րդ հոդվածներ	***Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ 1-ին 1-ին նախադասությունը շարադրել յալ խմբագրությամբ.*** *«2. ՄՈՒՀ-ի փնօրեն կարող է ընտրվել կամ սկվել այն անձը, որը սույն օրենքի 27-րդ ածով սահմանված կարգով ստացել է ՄՈՒՀ-ի վարման իրավունք (հավաստագիր) կամ վարման իրավունքի հավաստագիր (այսուհետև՝ սագիր)։»։*	Ընդունվել է	Ընդունվել է